

քաղաքի և քաղաքատեղա-ավանների /երևանի, Լենինականի, Կիրովականի, Հրազդանի, Ղափանի, Կամոյի, Հոկտեմբերյանի, Աշտարակի, Իջևանի, Միասինի, Բյուրեղավանի, Ալինինոյի և Եղեգնաձորի/ բնակչության վերաբերյալ կազմել և կառուցվածքը:

3. Ուսումնասիրվող քաղաքների վերաբերյալ կառուցվածքի, զարգացման տեմպերի, ձևավորման ժամանակաշրջանի և այլ գործոնները համարումը ցույց տվեց, որ քաղաքների վերաբերյալ կազմի ձևավորման մեջ նշված գործոնների ազդեցությունը տարբեր է, ըստ որում այդ ազդեցությունը քաղաքային բնակչության ձևավորման պրոցեսի վրա ընդհանրապես ունի համակարգային բնույթ, բայց ամեն մի քաղաքի բնակչության ձևավորման առանձնահատուկ գծերն արտահայտվում են մի կամ մի քանի գործոնների գերակշռությամբ:

4. Այս տեսակետից ուշադրավ է բնակչության ձևավորման բնույթի ազդեցությունը քաղաքներում կատարվող էթնոսոցիալ պրոցեսների վրա:

Յուրաքանչյուր քաղաքի բնակչության մեջ տեղի ունեցող պրոցեսները, տվյալ քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման նկարագրից և մշակութա-կենցաղային ինֆրաստրուկտուրայի մակարդակից բացի, մեծ չափով կախված են բնակչության ձևավորման բնույթից, վերաբերակիչ խմբերի սոցիալ-մշակութային բնութագրից:

5. Այսպիսով, քաղաքների էթնոսոցիոլոգիական հետազոտման խնդիրներից կարևորագույնը բնակչության ձևավորման բնույթի ազդեցությունն է սոցիալ-մշակութային պրոցեսների վրա, որը պատշաճ տեղ է զբաղում ժամանակակից ազգերի նոր ուրբանիստական պատկերի ձևավորման ուսումնասիրման գործում:

ՄԱՐԳԻՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԱՀԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԿԱՆԱՆ ԱՆԵԾՔՆԵՐՈՒՄ

1. Մահվան զաղափարը հայ ժողովրդական ասեծներում դրսևորվում է և ուղղակի /,,Մեռնիս,, ,,,Մահը տեսնեմ,,/, և փոխանվանված ձևավերով: Փոխանվանման դեպքում մահը պատկերացվում է կամ անձնավորված, կամ առարկայացված, երկու դեպքում էլ սերտորեն կապված առասպելաբանական տարբեր հավատալիքների ու պատկերացումների հետ:

2. Մահվան անձնավորումները հանդես են գալիս մի շարք անուսներով, որոնցից հաճախդեպ են Գրող /տևե ճոռ Գրող/, Մահ /անձնավորված/, Գրող և Մահ միասին, Աստված, իբրև մահ հարուցող, կամ տնօրինող, Հոգեառ /տևե՝ Հոգեառ հրեշտակ/, Գաբրիել հրեշտակ կամ հրեշ-

տակապետ, երբեմն՝ ՀԻԼԻԶՏՐԱԿ կամ ՀԼԻԶՏՐԱԿ, Հաշատք կամ Հրաշք, բո-
լորն էլ, քստ երևույթին, հրեշտակ /մահվան/ բառի աղավաղումներն են:
Հանդիպում են նաև Շնոհվոր /նաև՝ Մշու Շնոհվոր/, Խերբան, Եղի /հա-
վատար՝ Եղիա/, Սատանա, Չար, Ինչպես նաև Պեւացած կամ Մըտմտուկ
Ըրեքնակ /արեգակ/:

Այս բոլոր անձնավորյալ կերպարները գործառնական ընդհանրութ-
յամբ հանդերձ, ունեն նաև իրենց յուրահատուկ արարքները, որոնց
մեջ էլ դրսևորվում են մահվան հարուցման տարբեր ձևերն ու պատկե-
րացումները:

3. Մահվան առարկայացված պատկերացումները երկուսն են՝ Մեծ
Քուէն կամ Աւ Քուէն, և Գրողի, Յոխի, Չարի, Սատանայի, Աստծո Դավթա-
րոււ կամ Բարաթրոււ գրվել:

4. Թե անձնավորված և. թե առարկայացված պատկերացումներում,
նույնությամբ կամ փոխակերպված, պահպանվել են պատմական տարբեր դա-
րաշրջաններում մահվան մեծ երևույթի նկատմամբ հայ ժողովրդի ունե-
ցած առասպելաբանական ընկալումներն ու հավատալիքները, որոնք շատ
կողմերով նույնական են ու ընդհանրական զարգացման տարբեր մակար-
դակ ունեցող ժողովուրդների նախնական պատկերացումներին, միաժամա-
նակ ու՛նեն նաև իրենց ինքնատիպ ազգային յուրահատկություններն ու
դրսևորումները:

ՍԻՄՈՆ ՀՄԱՅԱԿՅԱՆ

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԽՈՒՏՈՒԻՆԻ ԵՎ ՀԱՅՈՑ ԳՐՈՂ ԱՍՏՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ուրարտական դիցարանի չորրորդ աստվածությունն է Խուտուի-
նին: Այս աստվածության պաշտամունքային կենտրոնն է եղել Տուշպա
/Վան/ քաղաքը: Խուտուինին Վանի թագավորության տիրող հարստու-
թյան հովանավոր ու տոհմիկ աստվածություններից մեկն է եղել, քա-
նի որ նրա պատվին Մինուա արքան արձանագրություն է կանգնեցրել
Տուշպա քաղաքում, այս աստվածը լսնդրելով ,,կյանք, ուրախություն,
մեծություն,,:

2. Գ.Ա.Ղափանցյանի և Գ.Ա.Մելիքիշվիլու կարծիքով, Խուտուինի
դիցանունը կարելի է բացատրել ուրարտերեն ,,խուտուութլին,, բա-